ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Միջնադարյան Հայաստանում Մխիթար Գոշի Դատաստանագրքի գործադրության վերաբերյալ հայագիտության մեջ իշխող կարծիքը բացասական է։ Դրա հիմքը, ամենից առաջ, արտաքուստ շատ ծանրակշիռ թվացող հետևյալ փաստն է. Դատաստանագիրքը չի բխել լիազոր իշխանությունից, այն մասնավոր անձի նախաձեռնության արդյունք է, ուստի ենթադրել են, որ այդպիսի աղբյուրից բխող օրենսգիրքը չէր կարող ընդհանուր պարտավորիչ ուժ ունենալ։ Այս հանգամանքը, անշուշտ, կարելի կլիներ անտեսել, եթե Դատաստանագիրքը հետագայում հաստատվեր ու վավերացվեր ազգային լիազոր իշխանությունների կողմից, մի բան, որ չի եղել։ Այս առիթով պետք է նշել հետևյալը։ Դատաստանագրքի հեղինակին արդեն մտահոգել է իր օրենսգրքի պարտավորիչ ուժի հարցը։ Մխիթար Գոշը քաջ գիտակցել է, որ մասնավոր անձից բխող օրենսգիրքը կարող է և ձեռք չբերել պարտավորիչ ուժ և միջոցներ է որոնել Դատաստանագրքին այդ ուժը հաղորդելու համար։ Նախադրության Ժ գլխում Մխիթար Գոշը գրում է. «Եւ քանզի արժանավայելուչ այն իսկ էր, զի ընդ բազումս քննելով յայսոսիկ ձեռնարկէաք, զսոյն զայս բաղձանաւք հայցէի, բայց սակայն ոչ պատահեաց ըստ բազում պատճառի։ Զի թէ դատաւորաց երկուց եւ երից ի միասին լինել ի դատելն իրաւունս համարեցաք, որչա՞փ եւ աստ ի դէպ էր լինել բազմաց ի միասին դատել զիրաւացին իրս եւ ապա գրով դրոշմել»[1]*։ Այսպիսով, Մխիթար Գոշը «բաղձանքով հայցել» ու «ախորժելով խնդրել» է, այսինքն՝ ճիգ ու ջանք է գործադրել, որ ազգային ժողով գումարվի և հաստատվի Դատաստանագիրքը, որով այն, բնականաբար, կստանար ընդհանուր պարտավորիչ ուժ։ Սակայն ինչ-ինչ պատճառներով ժողովը չի գումարվել։ Այսպիսով, իր իսկ՝ հեղինակի խոստովանությունից էլ իմանում ենք, որ նրա ժամանակ Դատաստանագիրքը օրենսդրական մեքենայի բովով չի անցել։ Սակայն, որքան էլ տարօրինակ թվա, անվերապահ նեգատիվ այս փաստից չի բխում նույնքան նեգատիվ այն եզրակացությունը, թե Դատաստանագիրքը չէր կարող գործնական կիրառության մեջ լինել։ Պատկերացումը, թե Դատաստանագիրքը չէր կարող պարտավորիչ ուժով գործնական կիրառման մեջ լինել, բխում է նոր ժամանակների ու այսօրվա մեր իրավաըմբռնումից, ըստ որի չէ թե որևէ օրենսգիրք, այլ, նույնիսկ, մեկ օրենք էլ չի կարող պար-*

---

[1] Այստեղ և հետագայում օգտվում ենք մեր կողմից հրատարակության պատրաստած հեղինակային սկզբնական բնագրից։ Դատաստանագրքի հրատարակված բնագրում, որը հետագայի խմբագրություն է, նույն միտքը արտահայտված է ավելի հստակ. «Բայց վայելուչ եղեալ՝ թէ ժողովով կամ ընդ բազումս քննելով էր եղեալ սա. զոր եւ ես ախորժելով խնդրէի. բայց ոչ պատահեաց այս վասն բազում պատճառի...» («Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, էջ 68)։

տավորիչ ուժով ընդհանուր կիրառություն գտնել, եթե չի բխում իշխանության համապատասխան լիազոր մարմնից։ Սակայն այսօրվա մեր իրավաըմբռնումները չի կարելի տարածել անցյալի վրա և այն ժամանակվա իրողությունները արտաբերել ըստ այսօրվա մեր ըմբռնումների, դրանով խախտվում է պատմականության սկզբունքը։ Իհարկե, տարբեր դարաշրջանների, սոցիալ-տնտեսական տարբեր տիպերի արդյունք հանդիսացող որոշ ըմբռնումներ, մասնավորապես իրավաըմբռնումներ, գեթ արտաքուստ կարող են նման և, նույնիսկ, նույնական լինել, սակայն նույնությունը ըստ էության՝ պետք է հաստատվի ամեն առանձին դեպքում և նոր միայն դարձվի եզրակացության հիմք։ Տեսական-մեթոդական այսօրինակ ոչ ճիշտ կողմնորոշումն էլ դարձել է պատճառ ոչ ճիշտ եզրակացության։ Շոշափվող հարցի տեսանկյունից արմատապես տարբեր են հին աշխարհի ու միջնադարի և մեր իրավաըմբռնումները։

Հայտնի է, որ հին Հռոմում իրավաբանները օրենսդրական որևէ իշխանություն չունեին։ Սակայն իրավագետները, մասնավորապես նրանցից առավել աչքի ընկածները, շատ մեծ հեղինակություն էին վայելում (auctoritas jurisprudentium), որով գործուն մասնակցություն ունեին իրավաստեղծման բնագավառում և, դրանով իսկ, իրավունքի աղբյուր էին։ Առաջին դարի իրավաբաններից մեկը՝ Պոմպոնիուսը, հանրապետության դարաշրջանի իրավաբաններ էլիուս Պետուս Կատուսի, Մարկուս Մանիլիուսի, Յունիուս Բրուտուսի և Պուբլիուս Մարկիուս Սկեվոլայի մասին ասում է, որ նրանք հիմնադրեցին, ստեղծեցին մասնավոր իրավունքը[2]։ Բայց սա հենց այն իրավունքն է, որ գործում էր Հռոմում՝ թե՛ հանրապետական, թե՛ կայսերական։ Հռոմեական իրավաբանների հեղինակությունը պաշտոնապես ճանաչում գտավ միայն Օգոստոսից սկսած։ Վերջինս որոշ իրավաբանների տվեց jus publice respondendi։ Այս արտոնության համաձայն՝ իրավաբանի հայտնած կարծիքը տվյալ գործի կապակցությամբ համարվում էր որոշում՝ տված կայսեր կողմից։ Իսկ 426 թ. որոշում ընդունվեց, որով օրենքի ուժ էր տրվում դասական շրջանի հինգ իրավաբանների կարծիքներին։ Օրինակների թիվը հռոմեա-բյուզանդական դարաշրջանից կարելի է շարունակել, ներառնելով նաև եկեղեցու իրավասության բնագավառը, որտեղ նույնպես դատական ատյաններում կիրառվում էին մասնավոր անձանց կողմից կազմված և լիազոր իշխանությունների կողմից չհաստատված ժողովածուներ՝ օրենսգիրք-կանոնագրքեր (նոմոկանոններ)։ Ի դեպ նշենք, որ մինչև Հովհան Օձնեցու կազմած Հայոց կանոնագիրքը, արտաքին եկեղեցին ունեցել է կանոնական որոշումների բազմաթիվ ժողովածուներ, որոնց մեջ առանձնանում են Դիոնիսիոս Փոքրի և Հովհան Սքոլաստիկոսի ժողովածուները, 14 տիտղոսից բաղկացած Սինտագման և 50 տիտղոսից կազմված Նոմոկանոնը։ Այս բոլոր ժողովածուները կազմվել են մասնավոր անձանց կողմից ու թեև կիրառվել են գործնականում, բայց չեն բխել իրավազոր իշխանություններից։ Դիոնիսիոս Փոքրի ժողովածուն, լրացված պապերի դեկրետալներով, 774 թ. Ադրիանոս առաջին պապը նվիրեց թագավորին, հետագայում կայսր Կառլոս Մեծին։ Միայն 802 թ. Ախենի կայսերական հավաքում այդ ժողովածուն հաստատվեց որպես ֆրանկյան եկեղեցու պաշտոնական Կանոնագիրք։ Ինչ վերաբերում է Հովհան Սքոլաստիկոսի ժողովածուին, ապա վերջինս կազմվել է այն ժամանակ, երբ պատրիարքը Ան-

[2] D. 1. 2. 2. 39. jus civile fundaverunt.

տիոքի եկեղեցու երեցն էր։ Ուստի, մեր Կանոնագիրքը որպես ժողովածու առաջինն է, որ բխում էր անմիջականորեն լիազոր իշխանությունից, հետևապես առաջին պաշտոնական Կանոնագիրքն է քրիստոնեական աշխարհում։

Միջնադարում ևս իրավաբանները, մանավանդ առանձնապես աչքի ընկած գիտնական իրավաբանները, շատ մեծ հեղինակություն ունեին օրենսդրության ու դատական առօրյայի բնագավառում, և պատճառներից մեկն էլ դա է, որ դատավորները հաշվի էին առնում նրանց կարծիքը վճիռ կայացնելիս, նրանց կազմած իրավական ժողովածուները օրենքի ուժ էին ստանում և նրանց իրավագիտական գործերը (տրակտատ) նույնիսկ տեղ էին գրավում դատավորների սեղանների վրա՝ օրենսգրքերի կողքին։

Հենց Մխիթար Գոշի դարաշրջանին պատկանող բազմաթիվ փաստերից նշենք մի քանիսը։ Գիտությանը հայտնի է Lo codi անունով XII դարի կեսերի ժողովածուն, կազմված հռոմեական աղբյուրներից, որ գործում էր Ֆրանսիայի հարավում։ Գլոսատորների դպրոցի վերջին խոշոր ներկայացուցիչը՝ Ակկուրսիուսը, շուրջ 1250 թ. հրատարակեց Glossa ordinaria, որը ամբողջ դպրոցի կազմած գլոսաներն էին Corpus Juris-ի վերաբերյալ և որը կիրառվում էր դատարաններում։ Պոստգլոսատորներից Բարտոլուսի (1314—1357) մեկնությունները մեծ հեղինակություն ունեին դատարաններում և դրանցով էին ղեկավարվում իսպանական դատարանները։ Մխիթարին ժամանակակից էր անգլիացի Հենրի Բրակտոնը (մահ. 1268 թ.), որը ոչ ուշ, քան 1256 թ. գրել է մի գործ՝ «Անգլիայի օրենքների ու սովորույթների մասին»։ Բրակտոնը հոգևորական էր ու դատավոր և իր գործը գրել է որպես մասնավոր անձ. ու չնայած դրան, այն լայնորեն կիրառվում էր անգլիական դատարաններում։ Նույնը պետք է ասել նաև Մխիթարի ու Բրակտոնի մի այլ ժամանակակցի՝ Էյկե ֆոն Ռեպգաուի ու նրա կազմած ժողովածուի՝ Սաքսոնյան հայելու մասին։

Օրինակների թիվը կարելի է շարունակել, ընդգրկելով միջնադարյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրները, բայց բավականանանք հիշատակվածներով։ Կարող ենք եզրակացնել. միջնադարում մասնավոր անձի կողմից կազմված օրենսգիրքը կարող էր գործնական կիրառություն գտնել դատարաններում առանց համապատասխան մարմինների կողմից հանրային-իրավական վավերացման կամ հաստատման. այս բանը կատարվում էր լռելյայն, իշխանության մարմինների կողմից ամենօրյա գործնական կիրառման փաստի ուժով, մանավանդ եթե օրենսգիրք կազմողը ընդհանուր ճանաչման արժանացած ու մեծ հեղինակություն վայելող անձ էր։ Այդպես էր նաև Հայաստանում թե՛ Բագրատունյաց թագավորության, և թե՛ Զաքարյան իշխանապետության շրջանում։

Ստույգ փաստերից գիտենք, որ XII դարի վերջերին Հայաստանում դատաստանագրքի կարիքը խիստ զգացվում էր. մի պահանջ էր դա, որ ստիպողաբար անհրաժեշտ էր բավարարել։ Այդ մասին վկայում են ժամանակակիցները։ Մխիթար Գոշը նշում է 12 պատճառ, որոնք մղել են իրեն Դատաստանագիրքը գրելու։ Այդ պատճառներից առաջինը այն է, որ հայերը դատաստանագիրք չունեին և օտարները՝ ոչ միայն այլադավանները, այլև քրիստոնյաները, հանդիմանում են հայերին դրա համար. «Զի թէպէտ ասացաւ ոչ լինել հարկաւոր գրով աւանդել մեզ դատաստան ի Տեառնէ, այլ այժմ կամեցաք, յաղագս զի բազում անգամ լուաք պարսաւանս ոչ յայլասեռից միայն, այլեւ ի քրիստոնէից....» (Նախադրութիւն, գլուխ Բ)։ Մի այլ փաստաթղթում՝

ամենայն հայոց կաթողիկոսին հասցեագրված նամակում (սրա մասին տե՛ս ստորև) Մխիթարը դարձյալ գրում է. «Յոյժ եպերիմք յայլասեռից՝ ոչ ունելով գիրս դատաստանի»։

Վկայում է նաև Ներսես Լամբրոնացին. «Յամս քահանայապետութեանն Հայոց Գրիգորի, որ երրորդն էր նախնեացն իւրոց, ի Հռոմկլայն, յաջորդ աթոռոյն, թուին ՈԽԲ (=1193 մեր թվականության— Խ. Թ.). յութեւտասներորդ ամի նորին հայրապետութեանն, խնդիր եղև առ նոյն սրբազանն ի քաղաքաց և ի գաւառաց բնակչաց՝ քաղաքական աւրինացն. զի որք Իսմայելացւոցն էին իշխանք ի քաղաքս և դատաւորք, զդատ Հայաստանեայցս ոչ դատէին. այլ զխնդրողսն իրաւանց առ իւրեանց աւրէնս առաքէին. զի այս էր ի նախագլուխ Մելիքացն հրաման առ դատաւորս քաղաքաց՝ յիւրեանց աւրինացն դատ թողուլ զնոսին։ Եւ եկեալ ոսոխք յեկեղեցին՝ հարցանէին աւրէնս ի քահանայից և ի քահանայապետաց. ոչ ունէին գիրս որով ընտրեսցեն զիրաւունս. զոր և այլոց ազգաց տեսանէին՝ քրիստոնէից և մսլիմանաց. այս ինքն հռոմայեցոց, հելլենացոց, ասորոց, եգիպտացոց, արաբացոց, պարսից և այժմու իշխողացս թուրքաց։ Ի խնդիր եկին ապա առ հայրապետս ի Հայաստանեայց՝ արթունք, եղերիկոսք և աշխարհականք. խեթկեալք յայլոց ազգաց և նախանձեալք զբարուոքն, և խուզեալ ընդ նա մեր յարկեղս գրոց կաթողիկոսարանին՝ ոչ գտաք աւրէն. բայց միայն զկանոնականսն, որ ի սուրբ հարցն ժողովելոց էր դրեալ. և որ ի նոյն յարեցաւ ի նոցանէ կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ։ Իսկ քաղաքի աւրէնս ոչ գտաւ ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս»[3]։

Ինչպես տեսնում ենք, դատաստանագրքի պահանջը խիստ էր։ Սրա անհրաժեշտությունը զգում էին և՛ հոգևորականները, և՛ աշխարհականները, ասենք նաև և՛ վերինները, և՛ վարինները։ Եվ ահա, մեր հատվածյալ հայրենիքի երկու ծայրերում մեր երկու մեծերը՝ Ներսես Լամբրոնացին Հայաշխարհի արևմուտքում, Մխիթար Գոշը՝ արևելքում ձեռնամուխ եղան բավարարություն տալու կյանքի պահանջին։ Սակայն Լամբրոնացու ստեղծածը համարյա կյանք չունեցավ, առավելապես մնաց ձեռագրերում ու դուրս չեկավ վանքերից. Մխիթար Գոշի ստեղծածը ձեռագրից անցավ կյանք, մտավ իր ժողովրդի մեջ և, նույնիսկ, քայլեց նրա հետ աշխարհի ճանապարհներով։ Պատճառը այն մեկնակետն էր, որից ելնում էին հեղինակները և այն վերջնակետը, որին ձգտում էին հասնել նրանք։

Ամեն օրենսգիրք, ստեղծվելով իրավական առօրյայի կարիքները բավարարելու համար, այդ անում է ղեկավարվելով իրավական որոշ փիլիսոփայությամբ, գրավելով սոցիալ-դասակարգային նկատելի դիրք և, ելնելով իրավաքաղաքական որևէ տեսությունից, հետամտում է քաղաքական որոշակի նպատակներ։ Այս ամենը կարող է ուղղակիորեն ասված չլինել օրենսգրքում, ինչպես Լամբրոնացու մոտ է կամ ասված լինել մասամբ, ինչպես է Մխիթար Գոշի Դատաստանագրքում, սակայն այն անպայման կա և երևան է հանում գործն իր ամբողջությամբ։ Այս տեսակետից նշանակալի տարբերություն կա Տարսոնի եպիսկոպոսի և Գետիկի վարդապետի միջև, թեև կա նաև ընդհանրություն։ Երկուսն էլ տիրապետող դասակարգի ներկայացուցիչներ են ու կանգնած են նրա դիրքերում, ձգտում են ամրապնդել տիրապետող հարաբերու-

---

3 Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 754—755։

թյունները և այլն։ Մի խոսքով, երկուսն էլ ելնում են ժամանակի պահանջից, փորձում են պատասխանել դարի առաջադրած կարևոր հարցերին ու թեև նույնն է այս վերջինների նրանց ըմբռնումը, բայց սկզբունքորեն տարբեր են այն ուղիները, որոնցով ընթանում են դեպի այդ հարցերի պատասխանը։ Ժամանակի մտածողները տարբեր ուղիներ էին տեսնում ազգային թագավորական պետականության վերականգնման և, մանավանդ, վերականգնածը պահպանելու համար։ Ներսես Լամբրոնացին ու Մխիթար Գոշը լավագույնս ցուցադրում են պետականության վերստեղծման ու պահպանման ուղիների տարընթաց որոնումները։ Տարսոնի եպիսկոպոսը գիմորոշված է դեպի լատին արևմուտքն ու Բյուզանդիոնը։ Խոսքը, ամենից առաջ, չի վերաբերում ծիսական-դավանաբանական այն զիջումներին արևմուտքին, որով արտաքուստ պայմանավորվում էր ազգային գերագույն շահի ապահովումը։ Խոսքն այն մասին է, որ գերազանցապես արտաքին ուժերի միակողմանի հաշվարկման վրա կառուցված այդ դիրքորոշումը անտեսում էր արտաքին մյուս գործոնները և, մանավանդ, թերագնահատում ազգային ներքին ուժերի համախմբման ու ամրապնդման հանգամանքը, որը միայն կարող կլիներ թագավորության վերականգնման ու պահպանման համար առավել նպատակասլացությամբ օգտվել արտաքին աղդակից, միաժամանակ զսպելով «բարեկամների» հեռուն գնացող ձգտումները։ Տեսականորեն անընդունելի էր և գործնականում վնասակար նաև քրիստոնեական աշխարհաքաղաքացու ներսիսյան ուսմունքը, հենց թեկուզ այն պատճառով, որ նա ծիսական-դավանաբանական ընդհանրություն էր ուզում ստեղծել ոչ թե հավասար փոխզիջումների ճանապարհով, այլ հայկականը հունա-լատինականին ենթարկելու ձգտմամբ[4]։ Մի խոսքով, հունա-լատինական կղերի կողմից առաջ քաշված ու եռանդուն պաշտպանվող ընդհանուր եկեղեցու գաղափարի մեջ սքողված էր քաղաքական ներկլանման գաղափարը[5] և Լամբրոնացին օրենսդրական իր գործունեությամբ կամա թե ակամա տուրք էր տալիս այդ գաղափարին։ Քաղաքական ընդհանուր իր կողմնորոշմանն էլ համապատասխան, Լամբրոնացին ոչ թե փորձեց ազգային օրենսգիրք ստեղծել, այլ հայերենի թարգմանեց հունական օրենքները։ Սակայն օրենքն այն ժամանակ նաև կրոն էր, իսկ այս վերջինը ոչ միայն ծես էր ու հավատամք, այլև քաղաքական ինքնորոշման ու ազգային ինքնապահպանման հզոր զենք։ Հունական օրենքների թարգմանությունը Լամբրոնացու արևմըտյան կողմնորոշման արտահայտություններից մեկն էր ու դրսևորումը նաև, որով նա փորձում էր ժողովրդայնացնել և, ուրեմն, ընդհանուր ուժ տալ այդ կողմնորոշմանը։ Ճիշտ է, այդ օրենքներով նա նպաստում էր հայ իշխող խավերի դասակարգային դիրքերի ամրացմանը երկրի ներսում, սակայն չէր սատարում ընդհանուր համազգային շահերին՝ հայ ժողովրդի քաղաքական ինքնորոշման ու ազգային ինքնապահպանման գործին։ Պատմությունը ցույց տվեց, որ Լամբրոնացին ճիշտ չէր։ Այդ պատճառով Լամբրոնացու թարգմանած օրենքները կյանքի կայուն ուղեգիր չստացան ու մնացին իբրև առավելապես

---

[4] Տե՛ս «Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին», Վենետիկ, 1847, էջ 168—192 և հտ., նաև նրա այլ աշխատությունները։

[5] Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, առաջին գիրք, Երևան, 1957, էջ 279 և հտ.։

մատենագրական գործ, և եթե գործել են, ապա սահմանափակ կիրառմամբ միայն։

Այլ ուղիներ է ուրվագծում Մխիթարի հեռատես ու խորագնաց միտքը։ Նա չի անտեսում արտաքին գործոնները, բայց շեշտը դնում է ներքին ուժերի համախմբման ու զորեղացման ճշմարիտ գաղափարի վրա։ Դատաստանագիրքը կազմելուց շուրջ մեկ տասնամյակ դեռ առաջ, Մխիթարը նշավակում է հայ իշխաններին, որոնք ավատական անջատամտության հեցած «լաւ համարէին ի ստրկութեան կալ ամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատութեան»[6]։ Սանձել ավատական կենտրոնախույս մղումները, համախմբել ներքին ուժերը, կենտրոնացնել երկրի բոլոր հնարավորությունները մի զսպանակի մեջ, որը միայն կկարողանար հարմար պահին հզոր պոռթկումով գեն շպրտել կաշկանդող արգելքները և ստեղծել «յանուրջս երեւութացող» թագավորությունը։ Ահա Մխիթարի նշած ուղին, նրա քաղաքական կողմնորոշումը։ Պատմությունն ու կյանքը հաստատեցին Մխիթարի ճշմարտացիությունը։ Քաղաքական ընդհանուր իր կողմնորոշմանն էլ համապատասխան Մխիթար Գոշը ոչ թե օտար օրենքները թարգմանեց հայերենի, այլ ձեռնամուխ եղավ ստեղծելու ազգային օրենսգիրք։ Սեփական դատաստանագրքի ստեղծումը Մխիթարի ազգային կողմնորոշման արտահայտությունն էր ու դրսևորումը նաև, որով նա ձգտում էր ժողովրդայնացնել, ուրեմն և ընդհանուր ուժ տալ այդ կողմնորոշմանը։ Իր Դատաստանագրքով նա անպայման ամրապնդում էր հայ իշխող խավերի դասակարգային դիրքերը երկրի ներսում, բայց և մեծապես սատարում ընդհանուր համազգային շահերին՝ հայ ժողովրդի ազգային ինքնապահպանման ու քաղաքական ինքնորոշման գործին։ Պատճառներից մեկն էլ դա էր, որ Դատաստանագիրքը ոչ միայն հոգևոր մեծագույն արժեք դարձավ իբրև մատենագրական գործ, այլև կյանքի կայուն ուղեգիր ստացավ որպես ամենօրյա կիրառության ուղեցույց և որպես իրավա-քաղաքական ծրագիր։

Տեսանք, որ Մխիթարի ժամանակ դատաստանագրքի կարիքը շատ մեծ էր։ Գիտենք նաև, որ այդ օրենսգիրքը կազմեց Հայաստանում լայն ճանաչման արժանացած և, իրոք, մեծ հեղինակություն վայելող մի անձ։ Միջնադարյան իրավարմբռնման ու հասարակական հոգեբանության վերը նշված պայմաններում այդքանն էլ արդեն բավական էր, որպեսզի Մխիթար Գոշի Դատաստանագիրքը Դասնո անապատի առանձնական խցից անցներ դատավորի հանրային ատենատեղը։

Պետք է նկատի ունենալ նաև հետևյալը։ Դատաստանագրքի ընդհանուր պահանջի պայմաններում Մխիթար Գոշը գրեց մի դատաստանագիրք, որ բավարարում էր և՛ վերիններին, և՛ վարիններին։ Հայկական հասարակության բոլոր խավերի համար ընդհանուր, համազգային շահի վճռական պաշտպանության դիրքորոշմամբ հանդերձ, Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով ընդառաջում էր նաև այդ խավերից յուրաքանչյուրի դասային-դասակարգային շահերին, հարկավ, գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների թույլատրած սահմաններում։

Դատաստանագիրքը մեզ է հասել բազմաթիվ գրչագրերով, որոնք թվա-

6 «Հայոց նոր վկաներ», աշխատությամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 24։

գրվում են սկսած Մխիթարի կենդանության ժամանակից մինչև XIX դարը։ Միայն Մաշտոցի անվան Մատենադարանում Դատաստանագրքի ձեռագրերի թիվը հասնում է շուրջ 40-ի։ Իրավացիորեն նկատել են արդեն, որ Դատաստանագրքի մեզ հասած գրչագրերի բազմաթվությունը նույնպես ապացույց է, որ այն գործող օրենսգիրք է եղել։ Դատաստանագրքի բովանդակությունը հոգեփրկիչ ընթերցանության նյութ չէ, և եթե այն բազմացրել են, ապա պիտի մտածել, որ դա արել են գործնական պահանջմունքին բավարարություն տալու համար։

Դատաստանագրքի խմբագրությունների մասին մանրամասն խոսք կլինի այլ տեղում, այստեղ նշենք միայն, որ Մխիթարի գործը մեզ է հասել երեք խմբագրությամբ՝ Ա, որ հեղինակային բնագիրն է և ցարդ հրատարակված չէ. Բ՝ որ հրատարակված բնագիրն է և որի հեղինակի վերաբերյալ ստուգապես ոչինչ հայտնի չէ, և Գ՝ որ հետագայի խմբագրություն է և նույնպես հրատարակված չէ։

Ինչպես արդեն նշվել է[7], Գ խմբագրությունը զգալիորեն համառոտված է։ Համառոտումն իրականացվել է, առաջին հերթին, նորմատիվ նյութը կրոնական հավելումներից թոթափելու հաշվին՝ անշուշտ, որքան դա հնարավոր էր։ Բացի դրանից, Ա խմբագրությունը գործող իրավունքը արձանագրելուց բացի պարունակում է նաև նորմեր, որոնք անցել են հեղինակի հայացքների խառնարանով և որոշ երանգ ստացել։ Գ խմբագրությունը գրեթե զերծ է դրանցից։ Այստեղ աշխատել են առավելապես հարազատ մնալ գործող իրավունքին։ Դատավորին պետք էին ոչ թե այս կամ այն նորմը հաստատող աստվածաշնչային օրինակներ, և ոչ էլ բարոյախոսական խրատ ու քարոզ, այլ կոնկրետ իրավանորմեր, որոնցով պետք է կարգավորեին կոնկրետ իրավահարաբերություններ՝ քաղաքացիական վեճ, քրեական գործ։ Նկատելի է, որ Դատաստանագրքի հեղինակային բնագիրը Գ-ում խմբագրվել է հենց այդ տեսանկյունով։ Բայց դա մի միջամտություն է, որ գործնական նպատակադրում է հուշում ու կիրառական խնդիրներ հետամտում։ Պատահական չէ բնավ, որ Դատաստանագրքի ձեռագրերի ընդհանուր թվի մեջ մեծագույն մասը ընկնում է Գ խմբագրությանը։ Մաշտոցի անվան Մատենադարանում եղած շուրջ քառասուն ձեռագրերից մոտ կեսը բաժին է ընկնում Ա և Բ խմբագրություններին միասին վերցրած, իսկ կեսը Գ խմբագրության գրչագրերն են։ Դատելով ձեռագրացուցակներից, այդպես է նաև սփյուռքի մատենադարաններում։ Պատճառը, թվում է, պարզ է. ամենից շատ բազմացրել են այն գործերը, որ ամենից շատ են օգտագործվել, և եթե Դատաստանագրքի խմբագրություններից ամենից շատ բազմացել է Գ խմբագրությունը, նշանակում է գործածության մեջ է եղել առավելապես հենց այդ խմբագրությունը։ Հասկանալի է, որ Դատաստանագրքի գործածությունը, ամենից առաջ, դատական գործածություն է նշանակում։ Իր տեղին թողնելով հանգամանալի փաստարկումը, այստեղ միայն ասենք, որ Գ խմբագրության գոյությունը (նաև Բ-ի) ուղղակի ապացույց է, որ Դատաստանագիրքը գործող օրենսգիրք է եղել։

---

[7] Տե՛ս Խ. Թորոսյան, Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերն ու խմբագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, նույնի՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ կապված մի քանի հարցերի մասին, նույն տեղում, 1964, № 4։

Հայտնի է, որ 1265 թ. Կիլիկիայում Սմբատ Սպարապետը՝ թագավորաեղբայրն ու հեծելազորի հրամանատարը, գրեց իր Դատաստանագիրքը՝ Կիլիկյան հայկական թագավորության պաշտոնական օրենսգիրքը։ Ցարդ կասկած չի եղել և չի էլ կարող լինել այն մասին, որ Սմբատի Դատաստանագիրքը գործող օրենսգիրք է եղել, թեկուզ այն պատճառով, որ Դատաստանագիրքը բխում էր բարձրագույն լիազոր իշխանությունից։ Բայց Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը այլ բան չէ, քան Մխիթար Գոշի Դատաստանագիրքը որոշ փոփոխություններով ու լրացումներով, որ կատարել է Սմբատը տեղի պայմաններին համապատասխան։ Մի կողմից, եթե Մխիթար Գոշի Դատաստանագիրքը լայնորեն տարածված ու գործող օրենսգիրք չլիներ, հազիվ թե հենց այդ Դատաստանագիրքը դառնար Սմբատի օրենսդրության հիմք, մյուս կողմից՝ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի միջոցով Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, արտաքուստ թեև անուղղակի, սակայն ըստ էության ուղղակի հաստատվել է ազգային լիազոր իշխանության կողմից։ Այս փաստը իր հերթին ավելի ևս բարձրացնելու էր Մխիթար Գոշի Դատաստանագրքի հեղինակությունը մայր հայրենիքում։ Եվ եթե, այնուամենայնիվ, կարող է կասկած լինել Մխիթար Գոշի Դատաստանագրքի գործադրության մասին, ապա դա կարող է վերաբերել առավելագույնը մինչև 1265 թ. ընկած ժամանակահատվածին, որից հետո թերահավատությունը արդեն միանգամայն անհիմն է դառնում, եթե, իհարկե, հիմնավորված համարվի կասկածը նախորդ ժամանակահատվածի վերաբերյալ։

Նույնն է հաստատում նաև լեհահայոց դատաստանագրքի գոյության փաստը։ Երբ լեհահայ գաղութի՝ ներքին ինքնավարության համար մղված երկարատև պայքարից հետո հարցը հասավ նրան, որ կառավարությունը արդեն պիտի տար դատական ինքնավարություն, գաղութին առաջարկվեց կառավարության հաստատմանը ներկայացնել իրենց օրենքները։ 1518 թ. գաղութը, հայերենից լատիներեն թարգմանված, իշխանությանը ներկայացրեց իր ազգային օրենքները։ Լեհաց թագավոր Սիգիզմունդ Մեծը 1519 թ. հաստատեց այն, որից հետո լեհահայ գաղութը ղեկավարվում էր իր ազգային՝ հայկական օրենքներով։ Բայց լեհահայոց դատաստանագիրքը այլ բան չէր, քան Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, որը, բնական է, համապատասխան փոփոխությունների էր ենթարկվել։ Արդ, հայերի հետ Լեհաստան գաղթած Դատաստանագիրքը պետք է որ հայերի մեջ մայր հայրենիքում տարածված, ընդունված ու իրական կյանքում արմատացած լիներ, հակառակ պարագային դժվար է պատկերացնել, որ այդքան պատասխանատու ու չափազանց կարևոր մի գործի համար, ինչպիսին էր դատական ինքնավարությունը, հայերը կարող էին կառավարությանը ներկայացնել իրենց անծանոթ, կյանքում չփորձված մի օրենսգիրք։ Ակնհայտ է, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հայերի համար կյանքում փորձված, իրավական առօրյայում ստուգված օրենսգիրք էր։ Աներկբա է, որ Դատաստանագրքի նկատմամբ այդ փորձը չէր կարող ձեռք բերված լինել Լեհաստանում, ուրեմն՝ այն գալիս էր մայր հայրենիքից։

Նույնարժեք փաստ է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը։ XVIII դարի սկզբներին վրաց արքայազն Վախթանգ VI-ը օրենքների իր Հավաքը կազմելիս, դրա մեջ մտցնելու համար Էջմիածնից խնդրում է նաև հայոց օրենքները, որով ղեկավարվում էին հայոց թագավոր-

ները։ Էջմիածնից նրան ուղարկում են Մխիթար Գոշի (նաև Աստրա-Հռոմեական) Դատաստանագիրքը, որպես նախնյաց կողմից կիրառվող օրենսգիրք։

Արքայազն Վախթանգը հայոց օրենքները վրացերեն թարգմանել տալով մտցնում է իր Ժողովածուի մեջ և դրանից հետո Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը գործում էր Վրաստանում, վրացական օրենքների հետ միասին ու դրանց հավասար ուժով՝ Վախթանգի ժամանակներից սկսած մինչև XIX դարի 60-ական թվականների դատական վերափոխումները Ռուսական կայսրության մեջ։ Սակայն Մխիթար Գոշի Դատաստանագրքի թարգմանությունը վրացերեն դժվար է բացատրել սոսկ XVIII դարի հանգամանքներով։ Այս և մի շարք այլ փաստերի հիման վրա ականավոր վրացագետ և վրաց իրավունքի պատմաբան ակադ. Ի. Ջավախիշվիլին իրավացիորեն գրում է, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքի վախթանգյան թարգմանությունը պետք է համարել նոր թարգմանություն և որ Մխիթարի Դատաստանագիրքը, բնագրով կամ թարգմանությամբ, գործում էր Վրաստանում Վախթանգից դեռ շատ առաջ և դարեր շարունակ[8]։ Ակադ. Ի. Ջավախիշվիլուն է միանում նաև վրաց իրավունքի մերօրյա ականավոր պատմաբան ակադ. Ի. Դոլիձեն[9]։ Արդ, որպեսզի Մխիթար Գոշի Դատաստանագիրքը Վրաստանում Վախթանգից առաջ գործող օրենսգիրք դառնար, այն պետք է գործող օրենսգիրք լիներ նախ Հայաստանում, որովհետև եթե Դատաստանագիրքը Հայաստանում լայնորեն տարածված, գործող չլիներ ու մեծ հեղինակություն չունենար, այն հազիվ թե փոխառության առարկա դառնար։ Միայն այդ դրական հատկանիշների առկայության դեպքում կարող էր Դատաստանագրքի համբավը դուրս գալ երկրի սահմաններից և առիթ դառնալ փոխառության՝ հարևան ժողովուրդների կողմից։

Բերենք մի փաստ ևս հօգուտ այն իրողության, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը գործող օրենսգիրք է եղել։ Դատաստանագրքի աղբյուրների մասին հանգամանալից խոսք այստեղ, բնականաբար, չի կարող լինել, ուստի նշենք միայն հետևյալը. Դատաստանագրքի հիմնական աղբյուրներն են՝ Աստվածաշունչը (Մովսիսական իրավունք), Կանոնագիրքը (Կանոնական իրավունք) և սովորութական իրավունքը։ Վաղուց նշված ու հաստատված փաստ է, մենք էլ ընդգծենք, որ այս աղբյուրներից յուրաքանչյուրը դարեր շարունակ, մինչև Մխիթարը և նրա ժամանակ էլ, Հայաստանում գործող ու կիրառվող իրավունքն էր։ Բնական է, որ գործող իրավունքի աղբյուրներից կազմված օրենսգիրքը նույնպես գործող էր լինելու, որովհետև «ի մի տփի» հավաքվելով, այդ օրենքները չէին կարող կորցնել իրենց ուժը, այնքան, որքան դրանցից յուրաքանչյուրի աղբյուրը անկախ էր Դատաստանագրքի հեղինակից. վեր նրանից ու հզոր։

Դատաստանագրքի հորինման պատմությանը այստեղ անդրադառնալ նույնպես չենք կարող. ասենք միայն հետևյալը։ Նախադրության Բ գլխից

---

[8] ივ. ჯ ა ვ ა ხ ი შ ვ ი ლ ი, ქართული სამართლის ისტორია, წიგნი პირველი, ტფილისი 1928, էջ 104, 109։

[9] ქართული სამართლის ძეგლები, ტომი I, ვახტანგ VI-ის სამართლის წიგნთა კრებული ტექსტები გამოსცა, გამოკვლევა და ლექსიკონი დაურთო პროფ. ი. დოლიძემ, თბილისი, 1963, էջ 630 և հտ.։

գիտենք, որ Աղվանքի Ստեփանոս կաթողիկոսը (սկզբում) զգալիորեն նպաստել է Դատաստանագրքի երևան գալուն. «Հանդիպեցաք առաջի տեառն Ստեփաննոսի՝ շնորհիւ Տեառն Յիսուսի Աղուանից կաթողիկոսի,— գրում է Մխիթարը,— և նոյն իրի (խոսքը Դատաստանագրքի մասին է— Խ. Թ.) վերըստին իշատակ եղեւ: Եւ նա յորդորեալ փութացոյց զմեզ ասելով, եթէ շնորհ յոյժ ունիմ իրիդ կատարման: Առաջի և մեք զմերս եդաք անկարութիւն, որպէս վերագոյնն: Սակայն յերկրորդելն և ի քաջալերելն խորհուրդ իմն ի մեզ եղեւ, եթէ արժան է հոգեւոր հրամանի անսալ»: Բայց պատմությունը միայն Ստեփանոս կաթողիկոսով չի վերջանում: Մխիթարը հարցը բարձրացրել է ավելի վեր, մինչև ամենայն հայոց կաթողիկոսը: Այդ մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Դատաստանագրքի Ա խմբագրությանը պատկանող՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2775 ձեռագրում: Դատաստանագրքի Նախադրության կցված Մխիթարի հիշատակարանի «ձեռնատուութեամբ հաւր Յովսեփայ եւ եղբաւր Պաւղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս» բառերից հետո ձեռագրում շարունակվում է. «Զոր ի խնդրո կաթողիկոսին Աղուանից հրաւիրեցաք ի ձեռնարկութիւնս գրոց դատաստանիս և յորդորմամբ ի ձեռն թղտո տեառն Գրիգորիսի հաոց կաթողիկոսի ձեռնարկի և սկսա ես՝ տառապեալս Մխիթար, որ և Գոշ և յետին ի գիտնականս, վստահանալով յաւժընդակութիւն աղաւթից սուրբ հայրապետացն և ամենայն սիրողաց Քրիստոսի Աստուծոյ»: Ուրեմն, դատաստանագիրք ստեղծելու իր մտադրության և դրա հետ կապված իր մտորումների մասին Մխիթար Գոշը նախապես տեղյակ է պահել նաև հայոց կաթողիկոսին և ամենայն հայոց կաթողիկոսը հատուկ նամակով «հորդորել», այսինքն՝ համոզել, քաջալերել, գուցե և առաջարկել-կարգադրել է, որ Մխիթարը գրի դատաստանագիրք:

Բերված տեղեկությունը թե ինչպես է հայտնվել № 2775 ձեռագրում, ուրիշ հարց է և ներկա դեպքում կարևոր էլ չէ, կարևորը այն հարցն է, թե հավաստի՞ է, արդյոք. այդ տեղեկությունը: Պատասխանը դրական է, որովհետև այն արձագանքում է մի այլ փաստաթղթի: Խոսքը վերաբերում է ամենայն հայոց կաթողիկոսին հասցեագրված Մխիթար Գոշի նամակին. «Զսուրբ և զաստուածաբեալ գլխոյդ եկեղեցեացս Հայաստանեաց և հանուրց կարգաց պետի անուանակրութեամբ Տեառնդ մերոյ հոգևորի և Լուսաւորչին մերոյ սրբոյ կոչման և աթոռոյ ժառանգաւորի, զհարկ հոգևոր հրամանի նուաստս յամենայնի ամենայնիւ Մխիթար ընկալայ, զոր վասն գրոցս էր դատաստանի, ի ձեռն եղբաւր եկելոյ ի ձէնջ, որ երբեմն ընդ մեզ սակաւ ինչ դեգերեալ ի վարժս և յիւրոցն շարժեալ փափագանաց ի ձեռնադրութիւն տեսչութեան, զոր և բարւոք դատեալ ի կորովի ձեր տեսութենէ, դարձաւ ի ձէնջ, խափանեալ յիւրոց խորհրդոցն, թէպէտ և այլուր դիւրն ելից ախտ: Սակայն իրաւացի կարծեցի յապաղել յայս հրաման մնալ և գրոյ, զի մի ցոյց ինչ կարծիցիմ զիմս առնել վաստակ սակաւ, այլ փութացայ և անվեհեր կատարել զայս գործ հոգևոր ըստ իմում կարի, խոշոր նիւթով և գրով, քանզի ժառանգութիւն իմ եղև անձեռնհասութիւնն ի սկզբանէ, ընդ միտ ածելով և զայս, թէ հաճելի ձեզ լիցի, դիւրին է փոխել ի նիւթ մագաղաթեայ գրչաւ ճարտարաւ, ապա թէ ոչ բաւական է և մեզ յաշխատութիւնս սնոտիս և այս կորուստ նիւթոյ: Աղաչեմ պարապմամբ և մտադիր ընթերցմամբ քննել զախտաժէտ մտաց իմոց զերկսդ, զի և ես միշտ ընդ կարծիւք քամահանաց լինելով և հալածեալ ի խնդրողէն՝ զդատաստանացդ գիրք փութով և տառապանաւք գծեալ յանգեցի.... Եւ արդ, եթէ ինչ գտցի հաճելի ձեզ, Տեառն շնորհ, որ

ոչ շիջուցանէ զփայլակն իմաստից և ոչ ի միում ժամանակի, իսկ եթէ ոչ՝ այն մերոյ տգիտութեան է, անպարտ ի պարսաւանաց շնորհն կացցէ, զի և ոչ նա իսկ ձեռնամուխ եղէ արտաքոյ ազդման շնորհին։ Եւ եթէ ընաւին անաւգուտ յե-կեղեցի իցէ և պատճառ գայթագղութեանն՝ հրոյ տացես ճարակ և հրամայիցես և որ առ մեզ է աւրինակ զնոյն առնել և անխափան ձերդ կացցէ հրաման, թէ-պէտ և մերքս ընթերցեալ վարդապետք՝ հաճեալ ընկալան...»։ Այս նամակը պահպանվել է Դատաստանագրքի հնագույն ձեռագրերից մեկում, որն այժմ պահվում է Զմմառի միաբանության մատենադարանում[10]։ Դատաստանագրքի ստեղծման պատմության համար մեծապես արժեքավոր այս նամակից ընդ-գծենք խնդրո առարկա հարցին վերաբերող մասը միայն։ Դատաստանագիրք գրելու իր մտադրության մասին Մխիթարը նախապես հայտնել է կաթողիկոսին։ Վերջինս հատուկ մարդու միջոցով թուղթ է ուղարկել Մխիթարին, հոգևոր հրա-ման՝ գրել դատաստանագիրք։ Մխիթարը կատարել է կաթողիկոսի հրամանը և, գրելով դատաստանագիրքը, մի օրինակ, սույն նամակի հետ ուղարկել է նրան ի քննություն, ի հավանություն և ի կարգադրություն առ ի կիրառումն։ Ընդգծե-լի է նաև, որ կաթողիկոսին ուղարկելու ժամանակ Դատաստանագրքից ընդա-մենը երկու օրինակ կար՝ մեկը Մխիթարինը, մյուսը՝ դրանից արտագրված օրի-նակը կաթողիկոսի համար, այսինքն՝ Դատաստանագրքի ամբողջ «տպաքանա-կը» հավասար էր երկուսի։ Մխիթարը խնդրում է, որ կաթողիկոսը հանգիստ և ուշադիր կարդա Դատաստանագիրքը և այնպես վճիռ կայացնի։ Եվ եթե կա-թողիկոսը կհանգի այն եզրակացության, որ «անօգուտ» գործ է կատարված, Մխիթարը խնդրում է այրել ուղարկված օրինակը և հրամայել, որ ինքն էլ նույն ձևով վարվի իր օրինակի հետ, որով Դատաստանագիրքը ոչնչանալու էր, իբր բնավ չէր գրվել։ Գիտենք, որ կաթողիկոսը չայրեց իրեն ուղարկված օրինակը (դա Զմմառի ձեռագիրն է նույնությամբ կամ ընդօրինակությամբ), գիտենք նաև, որ Մխիթարի օրինակն էլ բազմացավ ու տարածվեց։ Արդ, չի՞ նշանա-կում այդ, որ կաթողիկոսը հավանել ու ընդունել է Դատաստանագիրքը և իր բարձր ու լիազոր իշխանությամբ հանձնարարել գործադրության։ Եթե այդպես է, ապա մենք ուղղակի փաստ ունենք այն մասին, որ Դատաստանագիրքը հաս-տատվել-հանձնարարվել է ազգային բարձր իշխանության կողմից։

Սակայն, անկախ այս նկատումից, ուշագրավ է հետևյալ փաստը։ Նամա-կից իմանում ենք, որ արևելյան վարդապետները կարդացել ու հավանություն են տվել Դատաստանագրքին («մերքս ընթերցեալ վարդապետք՝ հաճեալ ըն-կալան»):

Բացի դրանից. Դատաստանագրքի առաջին օրինակներից մեկը (Վենետի-կի Մխիթարյան միաբանության մատենադարանի № 1237 ձեռագիրը) նվիրվել է Վախթանգին, հետևյալ մակագրությամբ. «Տէր Աստուած վայելել տացէ աս-տուածասէր և բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկայ՝ որդւոյ Հասանա, ի կամս իւր զգիրքս դատաստանի, անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին»։ Վախթանգը Արևելյան Հայաստանի հզոր իշխաններից մեկն էր, Վերին Խաչենի տերը, Մխիթարի հովանավորն ու բարեկամը։ Ինքնին ծագում է ենթա-դրությունը, որ Վախթանգը, բարեկամի հանդամանքով, նախապես պետք է

10 Ձեռագրի մանրաժապավենը, որից օգտվել ենք, պատրաստակամությամբ մեզ ուղարկեց Միաբանությունը, որին շնորհակալություն հայտնելը մեր հաճելի պարտքն ենք համարում։

իմանար Դատաստանագրքի ինչ լինելը, դրական վերաբերմունք ունենար դրա նկատմամբ, որպեսզի հեղինակը կարողանար նման մի հանձնարարականով («անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին») դատաստանագիրք նվիրել նրան։ Մի խոսքով, մեր ասելիքն այն է, որ թեև չի հաջողվել Դատաստանագիրքը ազգային ժողովի քննարկման առարկա դարձնել, այնուամենայնիվ ազգի տերերն ու մեծերը՝ կաթողիկոսները, վարդապետները, իշխանները, նրանք, ովքեր հենց կիրառողներն էին օրենքների, հավանել ու ընդունել են Դատաստանագիրքը։ Այդքանն էլ արդեն բավական է աներկբայելի համարելու, որ Դատաստանագիրքը ընդունվեց ի գործադրություն և գործադրվեց իրականում։

Վերն ասածը հաստատվում է նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանի հրապարակած մի փաստով։ Խոսքը վերաբերում է Գրիգոր Ծերենց Խլաթեցու (մահ. 1425 թ.) մի նամակին, որի մեջ, ի պատասխան հարցումի, ասված է. «Մեր օրէնքս այս է, թէ հարսին զարդերքն ու բաժինքն է, թէ փեսային, թէ տղայ եղեալ է ի միջին՝ այն ամենայն տղային է, և թէ տղայ չէ եղեալ ի մէջ՝ ուրան է զայն՝ գնացելոյ հոգին հոգանաւ Եւ թէ այլ մնայ՝ փեսային հօր տունն յիւր տէրն դառնայ և աղջկայ հօր տունն՝ յիւր տէրն դառնայ, ապա կերածն ու մաշածն չգայ յիշումն։ Մեր առաջնորդաց հրամանքն այս է, և որ ռազի չլինի մասն ու բաժին ընդ անհաւատսն դիցէ և դուք ողջ լերուք ի տէր աստուծով»։ Հրատարակելով նամակը, Լ. Խաչիկյանը գրում է. «Այս կարևոր նամակը.... հնարավորություն է տալիս պարզելու, որ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» իրոք գործածության մեջ է եղել միջնադարյան Հայաստանում»[11]։ Ի հաստատումն, ուսումնասիրողը վկայակոչել է Դատաստանագրքի՝ Վ. Բաստամյանցի հրատարակության առաջին մասի ՃԻԱ հոդվածը, որին և, իրոք, վերաբերում է Խլաթեցու «մեր առաջնորդաց հրամանքն այս է» ակնարկը։ Այս հոդվածում նշված է, որ կնոջ մահվան դեպքում «թէ մնայցէ զաւակ՝ հոգասցի հոգւոյ նորա պետք և մնացեալն զաւակին լիցին։ Իսկ եթէ զաւակ չիցէ մնացեալ.... դարձցի անդրէն բաժինն ի ձեռս ծնողացն կամ եղբարցն նորա. և ըստ նորին պատուիրելոյ հոգասցին զհոգի գիտութեամբն առնն, և որ սակաւ մնայ նոցա լիցի»։

Բերենք մի փաստ ևս, վերջինը։ Գրիգոր Տաթևացին գրում է. «Եւ փոխանակ արտաքին գործեաց՝ ունի և դատաւորն և առաջնորդն գիրս ուսուցութեան դատաստանի և քննութեան կանոնաց և օրինաց»[12]։ Մեր մատենագրության մեջ «Գիր դատաստանի» կամ «Գիրք դատաստանի» կոչվում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը (բերված վկայությունը գայթակղում է հասկանալ այն այնպես, թե դատավորն ուներ «գիրք դատաստանի ուսուցութեան» և կանոնների ու օրենքների (աստվածադիր, Մովսիսական) քննության գիրք, այլ կերպ՝ իրավունքի դասագիրք, ձեռնարկ, որ շատ երևելի փաստ կլիներ հայ իրավագիտության պատմության համար)։ Ինչպես տեսնում ենք, Տաթևացին ասում է, որ դատավորը և առաջնորդը (թվում է, պետք է հասկանալ թեմակալ առաջնորդի իմաստով, որը սովորաբար եպիսկոպոս էր) ղեկավարվում են դատաստանի գրով։ Նույն միտքը ավելի պարզ ձևով արտահայտված է քարոզի շարունակության մեջ. «Այլ չորս ինչ պիտանի է մարդոյն (դատավորին— Խ. Թ.). նախ՝ խոնարհութիւն, զի լսիցէ զգանկատն. երկրորդ՝ հեզութիւն, զի մի բարկասցի.

---

11 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, Առաջաբան, էջ LXXXIV։

12 «Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր», Կ. Պոլիս, 1741, էջ 458։

երրորդ՝ համբերութիւն, զի մի շուտափոյթ լիցի. չորրորդ՝ զի զօրութեամբ տացէ զպատիւն և զպատիժն դատախազացն։ Իսկ զառաջինն պարտ է ստանալ զիմաստութիւնն։ Նախ՝ կրթիլ և վարժիլ ուսմամբ զգիր դատաստանացն և զկանոնացն և զնօմոսացն թագաւորաց և զմովսէսին, եւ ապա առնել դատաստան»[13]։ Վերջապես, Տաթևացին հանդիմանում է դատավորին, որը «ոչ ընթեռնու զգիրս դատաստանի»[14]։ Ինչպես տեսնում ենք, դատավոր դառնալու առաջին պայմանը համարվել է գործող օրենսգրքերի, այդ թվում և Դատաստանագրքի իմացությունը, որպեսզի նրանով (նրանցով) «առնեն դատաստան», այսինքն՝ վճիռ կայացնեն։

Բերված փաստերն, այսպիսով, թույլ են տալիս հաստատապես ասելու, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը միջնադարյան Հայաստանում գործող ու կիրառվող օրենսգիրք է եղել։ Այս եզրակացությունը, նախ, նկատի ունի Դատաստանագիրքն ընդհանրապես, իր ամբողջության մեջ և ոչ այնտեղ արձանագրված ամեն մի տառն առանձին։ Երկրորդ՝ չի նշանակում, թե Մխիթար Գոշի Դատաստանագիրքը եղել է միջնադարյան Հայաստանում գործող միակ օրենսգիրքը։ Միջնադարում դատավորներն ընդհանրապես կաշկանդված չէին հրապարակի վրա եղած և ընդունված օրենսգրքերը ի ղեկավարություն ընտրելու հարցում։

Ավելորդ չենք համարում մեջ բերել ևս մի երկու տեղեկություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի կիրառության մասին արդեն մեր օրերում. մի քանի տարի առաջ հրապարակված մի հոդվածում կարդում ենք. «1930-ական թվականներուն հայ փաստաբան մը (Վ. Խըլագյան) գրողիս դիմեց Հալեպ՝ որ իրեն փոխ տամ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, հայտնելով թե՝ Հնդկաստանի Կալկաթա քաղաքին մեջ հանգուցյալ հարուստ հայ մը իր կտակին մեջ հիշած էր, որ իր թողած ժառանգությունը բաժնվի Մխիթար Գոշի Դատաստանագրքին օրենքներուն տրամադրությամբ։ Որոշ երաշխավորությամբ հանձնեցի Դատաստանագիրքը փաստաբանին։ Վեց ամիս վերջ Գիրքը վերադարձուց պր. Խըլագյան, հայտնելով որ՝ Հնդկաստանի անգլիական իշխանությունները հարգած էին կտակարարին կամքը և դատավարությունը տեղի ունեցած էր Մխիթար Գոշի Դատաստանագրքին տրամադրած օրենքներու համաձայն»[15]։

Հայկական որոշ գաղթօջախներում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը գործել է երկար ժամանակ։ Սուդանի հայկական գաղութի վարչական ժողովի առաջին նախագահ Սարգիս Իզմիրլյանի (պաշտոնավարել է 1917—1949 թթ.) ջանքերով գաղութը ճանաչվել է պետության կողմից և ստացել մի արտոնություն ևս, որով հայկական համայնքի անդամների՝ ժառանգական իրավունքի բնագավառի գործերը քննելիս Սուդանի դատարանները ղեկավարվել են Մխիթար Գոշի Դատաստանագրքով[16]։

---

13 Նույն տեղում, էջ 458—459։

14 Նույն տեղում, էջ 459։

15 Նշան Պ. Սաաթճյան, Մխիթար Գոշ Դանձակեցի, «Զարթոնք», 1963, N 39, 9 նոյեմբերի։

16 Տե՛ս Սարգիս Իզմիրլյան, Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին (անձնական հուշերուս ընդմեջեն), Պեյրութ, 1962, էջ 11 (սուդանաբնակ Տիգրան Հարությունյանի առաջաբանը) և Ա. Մարտիրոսյան, Սուդանի հայ գաղութը, «Հայրենիքի ձայն», 1970, 9 սեպտեմբերի, N 36։

О ПРАКТИЧЕСКОМ ПРИМЕНЕНИИ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ СУДЕБНИКА МХИТАРА ГОША

Х. А. ТОРОСЯН

(Резюме)

В арменоведении господствует точка зрения, согласно которой Судебник Мхитара Гоша не имел практического применения в судах средневековой Армении. Главным и почти единственным аргументом, приводимым в подтверждение этой точки зрения, является констатация того факта, что Судебник исходил от частного лица и не был утвержден в законодательном порядке. В статье пересматривается это мнение. Автор показывает, что приводимая выше точка зрения есть отражение правосознания и фактического положения дел в правовой жизни новых времен, средневековое же правосознание по этому вопросу было совершенно иным. Вся история средневекового права показывает, что разного рода сборники права и судебники, составлявшиеся частными лицами и не утверждавшиеся в законодательном порядке, могли применяться и действительно применялись в судах. В подтверждение сказанному в статье приводятся многочисленные примеры, как-то: сборник «Lo codi», «Glossa ordinaria», Аккурсия, сборник Бартоля, «Трактат о законах и обычаях Англии» Брактона, «Саксонское зерцало» Эйке фон Репгау и т. д., которые, будучи составлены частными лицами и не утвержденные в законодательном порядке, широко применялись в судах средневековой Европы. В статье приводится ряд других фактов и доводов, доказывающих практическое применение в судах средневековой Армении Судебника Мхитара Гоша.